

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի 2024 թվականին իրականացված միջոցառումների

### Գիտական ուսումնասիրություններ

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական ուսումնասիրություններն ուղղված են «Խոսրովի անտառ» պետական արգելոցի, «Խոր Վիրապ» և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերի տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի ուսումնասիրմանն ու պահպանմանը:

2024 թվականի ընթացքում բոլոր աշխատանքները կատարվել են համաձայն տարեկան աշխատանքային ծրագրի:

#### *ա) Խոշոր կաթնասուն կենդանիների հաշվառում*

«Խոսրովի անտառ» պետական արգելոցում կենսաբազմազանության, կենդանիների իրավիճակի և տարածվածության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով կանոնավոր կերպով անցկացվում են խոշոր կաթնասուն կենդանիների որոշ խմբերի ուսումնասիրություններ: «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ը կենսաբազմազանության մոնիթորինգն իրականացնում է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ՝ «Ընձառյուծի պահպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

2024 թվականին արգելոցի տարածքում ուսումնասիրությունների իրականացման նպատակով սահմանվել է դիտարկման ցանց, որը ներառում է մշտական և ժամանակավոր (սեզոնային) դիտակետերը, երթուղիները՝ դիտարկումների, ստուգայցերի, երթուղային հետազոտությունների և ուսումնասիրությունների անցկացման համար: Հաշվետու ժամանակաշրջանում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տարածվածության, տեսակային կազմի, քանակի, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակի մոնիթորինգի տվյալների ստացման նպատակով ստուգվել են արգելոցում առկա բոլոր 24

Ֆոտոթակարդները: (նկար 1) Ֆոտոթակարդները ստուգվում են 2-3 ամիս պարբերականությամբ:

Նկար 1



Մոնիտորինգն իրականացվել է ֆոտոթակարդների և տեսանկարահանման կադրերի միջոցով:

Հաշվառված կենդանատեսակների թվաքանակը

Հ/Հ	Կենդանիների տեսակը	Քանակը	Տեղամաս
1	Կովկասյան ընձառյուծ	1	Կաքավաբերդի և Խոսրով
2	Բեզդարյան այծ	121	Խոսրով, Խաչաձոր և Կաքավաբերդ
3	Գորշ արջ	53	Խոսրով և Խաչաձոր
4	Գայլ	65	Խոսրով և Գառնի
5	Լուսան	12	Խոսրով և Կաքավաբերդ
6	Աղվես	41	Խոսրով, Խաչաձոր, Գառնի, Կաքավաբերդ

7	Նապաստակ	63	Խաչաձոր, Գառնի, Կաքավաբերդ
8	Անտառային կատու	3	Խոսրով
9	Փորսուղ	45	Գառնի
10	Քարակզաքիս	48	Գառնի և Կաքավաբերդ
11	Աքիս	42	Խաչաձոր
12	Վայրի խոզ	35	Խոսրով և Կաքավաբերդ

Հաշվետու ժամանակաշրջանում՝ բոլոր եռամսյակների ընթացքում, ֆոտոթակարդներով նկարվել է կովկասյան ընձառյուծը (*Panthera pardus tulliana*), ինչպես նաև դաշտային ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են գիշատչի կենսագործունեության հետքեր, ոտնահետքեր (*նկար 2*): Կենդանու արեալը հիմնականում ուսումնասիրվում և ընդգրկում է պետական արգելոցի «Խոսրով» և «Կաքավաբերդ» տեղամասերը: Սա ընձառյուծի առանձնյակի Հայաստանում գրանցված ամենաերկար բնակության դեպքն է, որը փաստում է պետական արգելոցի պահպանության աշխատանքների արդյունավետությունը:

Ներկայումս ընձառյուծը ներառված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում որպես «կրիտիկական վիճակում գտնվող» և Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր ցուցակում որպես «Վտանգված» տեսակ, ինչի արդյունքում տեսակի պահպանությունը և ուսումնասիրումը շարունակում է մնալ բնապահպանական կարևոր խնդիրներից մեկը:

## Նկար 2



Դաշտային դիտարկումների ընթացքում բեզոարյան այծերը արգելոցի տարածքում արձանագրվել են ծովի մակարդակից 1700-2300մ բարձրություններում:

Բեզոարյան այծերի հաշվառումն իրականացվել է երկու փուլով՝ ամառային և ձմեռային, համապատասխանաբար հունիս և դեկտեմբեր ամիսներին: Այծերի մեծ մասը գրանցվել է արգելոցի հարավային մասում, որը պայմանավորված է հարմարավետ բնակավայրերի առկայությամբ: Դիտարկումների համար ուսումնասիրվել են երկու տարածքներ՝ «Խոսրով» և «Խաչաձոր» տեղամասերը (նկար 3):



### Նկար 3



Գորշ արջը հիմնականում հանդիպել է չորային նոսրանտառներում: Տարածքը ներառում է այն վայրերը, որտեղ աճում են պտղատու ծառեր, հատապտուղներ և ընկուզենիներ, որոնցով արջը սնվում է: (նկար 4)

### Նկար 4





Վայրի խոզը հիմնականում նկատվել է լայնատերև անտառում: Համեմատական ցուցանիշներ անցկացնելով նախորդ տարիների հետ վայրի խոզերի պոպուլացիայում դիտվում է աճի միտում: (Նկար 5)

Նկար 5



Երրորդ եռամսյակում ՀՀ “Կաթնասուննաբանների հայկական ասոցիացիա” ՀԿ-ն իրականացրել է կրծողների մշտադիտարկում «Խոսարովի անտառ» պետական արգելիցի Խաչաձոր տեղամասում(Նկար 6):

Նկար 6



Չորրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի աշխատակիցները «Խոսրովի անտառ» պետական արգելոցում իրականացրել են միջատների ուսումնասիրություն (Նկար 7):

Նկար 7



բ) Գիշատիչ թռչունների թվաքանակի և տեսակային կազմի որոշում

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում շարունակվում են գիշատիչ թռչունների որոշ տեսակների (սև անգղ, սպիտակագլուխ անգղ, գիշանգղ, մորուքավոր անգղ, քարարծիվ, տափաստանային ճուռակ, սովորական հողմավար բազե) ուսումնասիրությունները: Բների գրանցումն իրականացվում է կանոնավոր շրջայցերի ժամանակ, որի ընթացքում ստուգվում են հին բները, և գրանցվում են նոր հայտնաբերվածները: Հաշվետու ժամանակաշրջանում սև անգղի *Aegypius monachus*/ և մորուքավոր անգղի *Gypaetus barbatus*/ նոր բնադրավայրեր չեն գրանցվել:

«BirdsLink Armenia» կազմակերպության նախագահ Կարեն Աղաբաբյանի կողմից կազմակերպվել է թռչնադիտարկման տուր «Խոսրովի անտառ» պետական



արգելոցում: Մասնակիցները կարողացել են տեսնել սև անգղ, սպիտակագլուխ անգղ, գառնանգղ, ինչպես նաև գաճաճ արծիվ, քարարծիվ, տափաստանային ճուռակ, մեծ ճուռակ, և այլ թռչուններ(Նկար 8):

Նկար 8



գ) Սողունների որոշ տեսակների տարածվածության և դրանց քարտեզագրման աշխատանքների իրականացում

Սողունների ֆաունան արգելոցում բավական բազմազան է: Ուսումնասիրությունները կատարվել են դիտարկումների մեթոդով, որի ընթացքում արձանագրվել են կովկասյան ագամա, անդրկովկասյան մողեսիկ, հազվագյուտ և անհետացող տեսակներից գրանցվել է միջերկրածովային կրիա /Testudo graeca/: Արգելոցի տարածքում գետերի ափամերձ տեղամասերում գրանցվել է սովորական լորտու և ջրային լորտու: Գյուրգայի ինչպես նաև իժերի ապրելավայրերն օջախային բնույթ են կրում և կախված են ժամանակավոր և մշտական ապաստարանների և կերի առկայությունից:



դ) *Վեդի և Խոսրով գետերի ձկնապեսակների ուսումնասիրում (կարմրախայտ, քուռի բեղլու)*

Գիտական բաժնի կողմից շարունակվում են ուսումնասիրվել Վեդի գետի հունի հարթավայրային մասը՝ Եղեգնավան գյուղից մինչև պետական արգելոց ընկած հատվածը: Վեդի գետում առկա են բազմաթիվ արհեստական եղանակով առաջացած ջրվեժներ, որոնք խոչընդոտում են ձկների սեզոնային միգրացիային:

ե) *Հավաքված բուսապեսակների (հերբարիումների) գույքագրում, տեսակային կազմի որոշում և քարտադարանի ստեղծում*

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հերբարիումների գույքագրման, կարման և համարակալման աշխատանքները: «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ն ունի հարուստ բուսապահոց (հերբարիում), որտեղ առկա է պետական արգելոցի տարածքում աճող 1849 տեսակի բույսերից 1500-ից ավելին մի քանի հազար նմուշով՝ սկսած 1928 թվականից: 2024 թվականի ընթացքում 1120 հերբարիումների նմուշներ կարվել և թվայնացվել է:

Արգելոցի տարածքում ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի գիտաշխատողների կողմից արդեն 2-րդ տարին է տեղադրվում են մշտական փորձահրապարակներ, որտեղ ուսումնասիրվում են ընտրված ցուցիչ տեսակների և էկոհամակարգերի տարածվածությունը, պոպուլյացիայի վիճակը և հիմնական սպառնալիքները: Ցուցիչ տեսակները բաժանված են հետևյալ խմբերի՝ հազվագյուտ տեսակներ, ինվազիվ և էքսպանսիվ տեսակներ: Էկոհամակարգերից մշտադիտարկվում են և՛ անտառային էկոհամակարգերը, և՛ խոտային էկոհամակարգերը: Մշտադիտարկման մեթոդաբանությունը մշակվել է ծրագիրը համակարգող գիտական խմբի կողմից՝ հիմնվելով միջազգայնորեն ընդունված մեթոդաբանությունների վրա և հարմարեցնելով մեր պայմաններին:

Հաջորդ փուլով նախատեսվում է ստացված տվյալների վերլուծություն, համեմատում նախորդ տարվա տվյալների հետ, բացերի վերհանում, ինչպես նաև արգելոցի անձնակազմի համար նախատեսված դասընթացի կազմակերպում:

զ) *Պեպական արգելոցի թանգարանի և գիտական լաբորատորիայի աշխատանքների կազմակերպում և իրականացում*

Էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների շրջանակներում «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ը 2024 թվականի ընթացքում իրականացրել է 55 միջոցառում՝ 1600 մասնակից: Թանգարանում ներկայացված են «Խոսրովի անտառ» պետական արգելոցի, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր Վիրապ» պետական արգելավայրերի կենսաբազմազանությունը: Թանգարանային այցերի ընթացքում աշակերտները ծանոթանում են պահպանվող տարածքներին, դրանց հարստությանը, պատմամշակութային ժառանգությանը, բուսական և կենդանական աշխարհի խիստ վտանգված տեսակներին, վերջինների ճանաչման և պահպանման կարևորությանը: Գիտելիքների ամրապնդման նպատակով աշակերտները դիտում են ֆիլմեր, ֆոտոթակարդներով նկարված լավագույն կադրերը, ինչպես նաև մասնակցում են թեմատիկ խաղերին:

Թանգարանն ունեցել է 1878 այցելու:

2024թ.-ին թանգարանային ցուցանմուշների պահպանման և պատշաճ ցուցադրման նպատակով կատարվել են ավտոահանման աշխատանքներ:

Էկոկրթական միջոցառումների նկարագիրը ներկայացված է աղյուսակում:

*Աղյուսակ 1 1-ին եռամսյակ*

Թեմա	Ուսումնական հաստատության անվանումը	Դասարան
«Հայաստանի Կարմիր գրքում գրանցված գիշատիչ կաթնասունները»	Ուրցաձորի միջնակարգ դպրոց	7-րդ
«Կովկասյան ընձառյուծի պահպանությունը Հայաստանում»	Վեդու թիվ 1 հիմնական դպրոց	7-րդ գ
Ջրային ռեսուրսների կառավարում պահպանություն	Վեդու թիվ 1 հիմնական դպրոց	7-րդ ա



«Հայաստանի կենդանական աշխարհի հազվագյուտ և անհետացող տեսակները»	Ուրցածորի միջնակարգ դպրոց	3-րդ
Հայաստանի խոնավ տարածքները	Գոռավանի միջնակարգ դպրոց	9-րդ
Ճանաչենք անտառի բնակիչներին	Վեդու թիվ 1 մանկապարտեզ	Միջին խումբ
Վայրի բնության համաշխարհային օր	Վեդի ավագ դպրոց	10-րդ
Անտառների դերը և նշակությունը, կրճատման պատճառները: Անտառային հրդեհներ:	Վեդու թիվ 2 հիմնական դպրոց	7-րդ
Բնության հատուկ պահպանվող տարածքների դերը և նշանակությունը կենսաբազմազանության պահպանման գործընթացում	Գոռավանի միջնակարգ դպրոց	9-րդ
Բնության հատուկ պահպանվող տարածքների դերը և նշանակությունը կենսաբազմազանության պահպանման գործում	Վեդու ավագ դպրոց	11-րդ

*Աղյուսակ 2      2- րդ եռամսյակ*

Թեմա	Ուսումնական հաստատության անվանումը	Դասարան
Բնության հատուկ	Վեդու ավագ դպրոց	10-րդ

պահպանվող տարածքների դերը և նշանակությունը:		
Կովկասյան ընծառյուծի պահպանությունը Հայաստանում	Երևանի Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց	6-րդ
Ճանաչենք շրջակա միջավայրը	Ավշարի միջնակարգ դպրոց	3-րդ ա
Հայաստանի Կարմիր գրքում գրանված կաթնասունները	Երևանի թիվ 6 հիմնական դպրոց	5-րդ
Ճանաչենք շրջակա միջավայրը	Ավշարի միջնակարգ դպրոց	3-րդ բ
Կենդանին մեր բարեկամն է	Ավշարի միջնակարգ դպրոց	2-րդ ա
Բնության հատուկ պահպանվող տարածքների դերը և նշանակությունը	Եղեգնավանի միջնակարգ դպրոց	11-րդ
Հայաստանի կենդանական աշխարհը, կրճատման պատճառները	Արարատ քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոց	10-րդ
Հայաստանի անգղները	Գոռավանի միջնակարգ դպրոց	7-րդ
Ճանաչենք շրջակա աշխարհը	Ավշարի միջնակարգ դպրոց	2-րդ բ
Ճանաչենք անտառի բնակիչներին	Դաշտաքարի մանկապարտեզ	Միջին և Ավագ խմբեր
Ճանաչենք անտառի բնակիչներին	Լապտերի մանկապարտեզ	Ավագ խումբ
Կովկասյան ընծառյուծի պահպանությունը Հայաստանում	Վեդու թիվ 1 հիմնական	6-րդ
Հայաստանի չվող	Երևանի Հակոբ Կարապետցի անվան թիվ 6	6-րդ



թռչունները	հիմնական դպրոց	
Ճանաչենք անտառի բնակիչներին	Սիսավանի նախակրթարան	
Բնության հատուկ պահպանվող տարածքների դերը և նշանակությունը	Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցի	6-րդ Ա
Հայաստանի Կարմիր գիրք	Ուրցաձորի միջնակարգ դպրոցի	3-րդ դասարան
Անտառների դերը և նշանակությունը	Արարատ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց	7-րդ
Գոռավանի ավազուտներ պետական արգելավայր	Գոռավանի միջնակարգ դպրոց	7-րդ
Հայաստանի Կարմիր գիրք	Նոր Գեղի N 1 միջնակարգ դպրոց	4-րդ
Ճանաչենք շրջակա աշխարհը	Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց	2-րդ
Հայաստանի կենսաբազմազանությունը	Գոռավանի միջնակարգ դպրոց	5-րդ
Հայաստանի Կարմիր գրքում գրանցված թռչունները	Երևանի թիվ 77 հիմնական դպրոց	7-րդ դասարան
Ճանաչենք անտառի բնակիչներին	Ուրցաձորի նախակրթարան	
Ճանաչենք անտառի բնակիչներին	Ավշարի միջնակարգ դպրոց	1-ին Ա և Բ

*Աղյուսակ 3*

*3- րդ եռամսյակ*

Թեմա	Ուսումնական հաստատության անվանումը	Դասարան
Բնության հատուկ պահպանվող տարածքների	Գոռավանի միջնակարգ դպրոց	9-րդ

դերը և նշանակությունը:		
Կովկասյան ընծառյուծի պահպանությունը Հայաստանում	«Պատանի սկաուտներ» Անդրանիկ Զոհրաբյան մասնաճյուղ	3-10-րդ
Անգղների կենսաբանական առանձնահատկությունները	Վարդաշենի միջնակարգ դպրոց	5-րդ
Հայաստանի Կարմիր գրքում գրանված կաթնասունները	Երևանի թիվ 190 ավագ դպրոց	11-րդ
Ճանաչենք շրջակա միջավայրը	«Լանա» մանուկների ակադեմիայի	
Կենդանին մեր բարեկամն է	Վեդու թիվ 2 մանկապարտեզ	Ավագ խումբ
Կենդանին մեր բարեկամն է	Գոռավանի «Գոռ» մանկապարտեզ	Ավագ խումբ
Ճանաչենք անտառի բնակիչներին	Ավշարի միջնակարգ դպրոց	1-ին
«Խոսրովի անտառ» պետական արգելոց	«Խոսրովի անտառ» պետական արգելոց «Խորեն և Շուշանիկ Ավետիսյան» դպրոց և համայնքային կենտրոն	8-րդ
Հայաստանի կենսաբազմազանությունը	Գոռավանի միջնակարգ դպրոց	5-րդ
Հայաստանի կենսաբազմազանությունը	Գոռավանի միջնակարգ դպրոց	6-րդ

4-րդ եռամսյակում էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների շրջանակներում «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ը 595 դպրոցականների /Երևանի թիվ 194 թիվ 6 հիմնական դպրոցներ, Արտաշատի թիվ 1 և թիվ 5 դպրոցներ, Մասիսի թիվ 1 հիմնական դպրոց, Լեռնագոգի միջնակարգ դպրոց, Այգեգարդի, Դեղձուտի, Արևաշատի միջնակարգ դպրոցներ, Այգավանի միջնակարգ դպրոց և այլն/ համար բնապահպանական թեմաներով կազմակերպել են դասընթացներ: Գիտելիքների ամրապնդման



նպատակով աշակերտների համար կազմակերպվել են տարբեր բնապահպանական թեմաներով մշակված խաղեր:

Կազմակերպվել են քայլարշավներ և գիտաճանաչողական էքսկուրսիներ արգելոցի տարածքում: Խոսրով տեղամասում իրականացվել է թռչնադիտարկում: Լեռնագոգ գյուղի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտները քայլարշավ են իրականացրել պետական արգելոցի «Խոսրով» տեղամասում: Գիտության բաժնի աշխատակիցները ներկայացրել են արգելոցի կենսաբազմազանությունը՝ կարևորելով մարդ և բնություն կապը (*նկար 9*):

### Նկար 9



Արարատ քաղաքի ավագ դպրոցի աշակերտները գիտաճանաչողական այց են կատարել «Խոսրովի անտառ» պետական արգելոցի «Վահագնի» և «Աստղիկի» ջրվեժներ: (*նկար 10*)

## Նկար 10



### **Էկոզբոսաշրջության կազմակերպման և զարգացման աշխատանքներ**

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ը իր կառավարման ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում այցելությունների թույլտվություն և զբոսաշրջային գործունեություն իրականացնում է հիմք ընդունելով առկա սահմանափակումներն ու կանոնակարգերը: «Խոսրովի անտառ» պետական արգելոցում, «Խոր Վիրապ» և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերում էկոզբոսաշրջության կազմակերպման և զարգացման հիմնական նպատակներն են՝ զբոսաշրջիկներին ծանոթացնել բնության արժեքներին, նպաստել էկոլոգիական դաստիարակությանը և կրթությանը, բնության հետ հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, բնական միջավայրում մարդկանց վարքականոնի չափորոշիչների մշակմանը, բնության նկատմամբ պատասխանատվության զգացման ձևավորմանը, որոնք էլ իրենց հերթին բնական և պատմամշակութային ժառանգության, էկոհամակարգերի պահպանության բարելավման, ինչպես նաև զբոսաշրջությունից հավելյալ եկամուտների ստացման, բնապահպանական և սոցիալ տնտեսական խնդիրների լուծման նախադրյալներ են ստեղծում:



Էկոզբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներն, ինչպես նաև զբոսաշրջային կազմակերպությունների և տուրօպերատորների հետ համագործակցությունն իրականացվում է հիմնվելով բնապահպանական սահմանափակումների, զբոսաշրջության նպատակով տարածքի օգտագործման հնարավորությունների և բնապատմական արժեքավոր տեղամասերում արգելոցային և արգելավայրային ռեժիմների պայմաններում թույլատրելի էկոճանաչողական, պատմամշակութային և գիտաճանաչողական զբոսաշրջության կազմակերպման հնարավորությունների վրա: Բոլոր աշխատանքները կատարվել են համաձայն 2024 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում զբոսաշրջային այցեր իրականացվել են «Խոսրովի անտառ» արգելոցի «Գառնի», «Խոսրով» և «Խաչաձոր» տեղամասերում գտնվող երթուղիներով: Այցելուների անվտանգության և արգելոցային ռեժիմի առանձնահատկություններով պայմանավորված «Կաքավաբերդ» տեղամասի որոշ երթուղիները փակ են այցելությունների համար:

Այցելուների անվտանգությամբ և արգելոցային ռեժիմով պայմանավորված՝ քայլարշավային երթուղիները պատշաճ կերպով վերահսկվում են, կազմակերպվում են աղբահանության աշխատանքներ, այցերը կանոնակարգվում են բնական էկոհամակարգերի վրա զբոսաշրջության հնարավոր ազդեցության բացառման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում համագործակցության շրջանակներում իրականացվել են զբոսաշրջային այցեր «Արմջեռ», «Ուան ուեյ տուր», «Արմենիա թրեվլ», «Համշեն տուր» և այլ կազմակերպությունների հետ համատեղ: 2024 թ.-ին «Խոսրովի անտառ» պետական արգելոցն ունեցել է 2417 այցելու: